«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ԱՌԱՐԿԱ	ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ	ԱՆԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՄԱՐԶ	ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. 1. Ուսուցման մեթոդների դասակարգումն ըստ գիտելիքների ստացման աղբյուրների.....4

Ուաուցման խոսքային մեթոդներ 6

Աշխարհագրության ուսուցման դիտազննական մեթոդները.....11

ՈՒսուցման գործնական մեթոդները.....13

ՈՒսուցման մեթոդների դասակարգումը՝ ըստ դպրոցականների իմացական գործունեության բնույթի.....15

Բացատրացուցադրական մեթոդ.....16

Վերհիշական կամ ռեպրոդուկտիվ մեթոդ.....18

Պրոբլեմային ուսուցման մեթոդները 19

Աշակերտների ինքնուրույն գործունեությունը.....25

Ինտերակտիվ մեթոդների ու եղանակների կիրառումը աշխարհագրության դասերին.....27

Եզրակացություն.....31

Օգտագործված գրականության ցանկ.....32

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրության ուսուցման գործընթացում մեծ դեր ունեն ժամանակակից ուսուցման ձևերը, որոնք նպաստում են սովորողների մտավոր ունակությունների ակտիվացմանն ու զարգացմանը:

Ներկայումս օբյեկտիվ անհրաժեշտություն է դասավանդման ավանդական մեթոդների ու եղանակների հետ համատեղ աշխարհագրության դասավանդման մեջ ներդնել ուսուցման ժամանակակից փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ և եղանակներ՝ նպատակ ունենալով բարձրացնելու ուսուցանվող նյութի յուրացման արդյունավետությունը և զանազան հնարներ կիրառելու հնարավորություն ընձեռնելով:

Արդի պայմաններում ժամանակակից սերունդ կրթելու համար մեթոդական այս նորարարությունները պարտադիր են: Այն նպաստում է սովորողի ինքնուրույն մտածելու ստեղծագործելու զարգացմամբ:

Մեթոդը հունարեն metodos բառի հայերեն թարգմանությունն է, որը նշանակում է նպատակին հասնելու եղանակ, ուղի, որոշակի կարգավորված գործունեություն:

«Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործունեության համակարգված եղանակն է՝ ուղղված կրթական նպատակների իրականացմանը»:

Ուսուցման մեթոդների մեկնաբանության այսպիսի համալիր մոտեցումը անհրաժեշտություն է առաջացնում բացահայտել մեթոդների կապը ուսուցման բովանդակության հետ:

Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին, ուսուցչի կողմից չի մատուցվում պատրաստի գիտելիքները, այլ հնարավորություն է տրվում աշակետներին ակտիվացնել իրենց գիտելիքները, հիշողությունները, ինչպես նաև պրակտիկ գործունեության ընթացքում ձեռքբերել նորանոր գիտելիքներ ու հմտություններ:

Աշխարհագրության դասավանդման հիմնական նպատակներից է սովորողի մեջ խորացնել բնագիտությունից ստացված գիտելիքներն ու գիտական պատկերացում տալ աշխարհի ու աշխարհում ընթացող բնական ու հասարակական երևույթների մասին:

Աշխարհագրության դասագործընթացի արդիականացման և այն առավել արդյունավետ դարձնելու գերակա պայման է համարվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրումն ու դրանց գործնական կիրառումը դպրոցում:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակենտրոն մոտեցումները

բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար:

Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշել, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդները ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

ԳԼՈՒԽ 1.1 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Ուսուցման մեթոդները, այդ թվում նաև աշխարհագրության դասավանդման մեթոդները, միմյանցից տարբերվում են իրենց հատկանիշներով, կողմերով, ուստի անհրաժեշտ է նրանց դասակարգման այլ մոտեցում: Անհրաժեշտ է, որ մոտեցումները պայմանավորված լինեն այն աղբյուրներով, որոնցից սովորողները ձեռք են բերում գիտելիքներ և, իհարկե, նաև սովորողների ինքնուրույնության աստիճանով:

Օրինակ՝ եթե ուսուցիչը նյութը շարադրում է բանավոր, ապա սովորողների համար գիտելիքների աղբյուրը նրա խոսքն է: Ինքնուրույն դիտումների ժամանակ գիտելիքների աղբյուրը զննվող առարկան է: Աշխարհագրական հրապարակում, օթերևութաբանական կայանում, բնության գրկում, գործնական աշխատանքներ կատարելիս գիտելիքների աղբյուր է հանդիսանում աշակերտների (սովորողների) ինքնուրույն աշխատանքային գործունեությունը: Ուստի կարելի է նշել որ ըստ հաղորդման աղբյուրների և ինֆորմացիայի ըմբռնման բնույթի մեթոդները կարելի է բաժանել երեք խմբի՝ խոսքային, զննական և գործնական:

Աշխարհագրության դպրոցական դասընթացը սերտ կապված է գիտական աշարհագրության հետ կառուցվածքով, բովանդակությամբ և մեթոդներով: Ուստի դպրոցական աշխարհագրության միջուկը եղել և մնում են աշխարհագրություն գիտության հիմունքները, որոնք սովորողներին ներկայացվում են գիտելիքների աղբյուրներով (գրքեր, քարտեզներ, պրոֆիլներ, մոդելներ, վիճակագրական տվյալներ, պարբերականներ և այլն): Հետևաբար, աշխարհագրության դասավանդման մեթոդիկան մշտապես

օգտագործելու է այն մեթոդները, որոնք աշխատում են գիտելիքի ստացման աղբյուրների հետ, քանի որ նրանցում նյութը ներկայացված է ըստ գիտական աշխարհագրության տրամաբանության և անհնար է ուսումնասիրել գիտության հիմունքներն առանց դրա աղբյուրների օգտագործման: Նշված մեթոդների խմբերը՝ խոսքային, զննական և գործնական, անվանում ենք նաև «ավանդական մեթոդական համակարգ» (տես աղ. 2):

1. խոսքային մեթոդներ, ուսուցչի՝ բանավոր շարադրանքը՝ պատմություն, բացատրություն, դասախոսություն, զրույց, աշխատանք դասագրքի հետ, թվային տվյալների հետ
2. դիտազննական մեթոդներ (քարտեզների, դիտազննական պարագաների կիրառում, դիտարկումների և փորձերի կատարում), որոնք հիմնված են ուսումնասիրվող նյութի բնօրինակի կամ նրա պատկերի անմիջական ընկալման վրա
3. գործնական մեթոդներ. աշխատանքներ տեղանքում (տեղանքի հանույթ, պլանի գծագրում, բարձրությունների և խորությունների չափում, գետի հոսքի, լայնության, խորության չափում և այլն), որոնց հիմքում ընկած է աշակերտի ինքնուրույն գործունեությունը:

Աղյուսակ 2.

Աշխարհագրության ուսուցման ավանդական մեթոդները
(ըստ գիտելիքների ստացման աղբյուրի)





Խոսքը մարդկային շփման գլխավոր միջոցն է: Առանց նրա հնարավոր չէ նաև ուսուցման գործընթացը: Ուսուցման խոսքային մեթոդները նույնքան հին են, որքան և ինքը՝ ուսուցումը: Սակայն մինչ օրս չեն կորցրել իրենց արդիականությունը, քանի որ ազդում են սովորողների խոսքի և մտածողության զարգացման, անձի՝ հոգականության ձևավորման վրա:

«Խոսքային մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործունեության համակարգված եղանակն է, որն իրականացվում է խոսքի միջոցով»:

Խոսքային մեթոդները տարբերվում են նյութի բովանդակության շարադրման ձևով: Այն կարող է կրել մենախոսության բնույթ (ուսուցչի պատմումը, բացատրությունը, դպրոցական դասախոսությունը, ուսումնական գործողության եղանակի պարզաբանումը, աշխարհագրական տեղեկատվական աղբյուրի հետ աշխատելու հնարներին ծանոթացումը): Կրում է նաև երկխոսության բնույթ՝ զրույց աշակերտների հետ, աշխատանք դասագրքում զետեղված հարցերի և առաջադրանքների հետ: Խոսքային մեթոդների հիմնական կոչումն է՝ ուսումնական տեղեկության մատուցումը նոր գիտելիք ձևավորելու նպատակով, հանձնարարականների ու հենարանային գիտելիքների արդիականացումը, ուսումնական նյութի ընդհանրացումն ու համակարգումը: Ուսուցչի պատկերավոր և հուզական խոսքը մեծ ազդեցություն է թողնում սովորողի խոսքի տրամաբանության ձևավորման և զարգացման վրա: Աշխարհագրության որոշ ուսուցիչներ խուսափում են պատմելուց՝ նախընտրելով զրույցը՝ իբրև առավել ակտիվ մեթոդ: Սակայն ուսուցչի մենախոսությունը ընկալվում է սովորողի կողմից իբրև մտքի կանոնավոր,

տրամաբանական կուռ կառուցվածք ունեցող շարադրանքի նմուշ (ուստի ուսուցչի խոսքն անփոխարինելի դեր ունի ողջ կրթական գործընթացում, ինչը պարտավորեցնում է նրան հանդես գալ մշակված և համակարգված խոսքով): Սովորողի ինքնուրույնության տարբեր աստիճանները (պարզ վերարտադրումից մինչև ստեղծագործական) իմացական գործունեության ընթացքում արտահայտում են մեթոդի ներքին կողմը: Արտաքին կողմը արտահայտվում է սովորողների խոսքի ձևի մեջ, քանզի նրանցից յուրաքանչյուրը, պատասխանելով ուսուցչի կամ դասագրքի հարցերին իրենց միտքը ձևակերպում են յուրովի: Օրինակ՝ բանավոր շարադրանքի ընթացքում աշակերտները բաց են թողնում մանրամասները և խոսում գլխավորի մասին, վերափոխում են նյութի հերթականությունը, ամրապնդում այն նոր տվյալներով, որոնք ստացել են այլ տեղեկատվական աղբյուրներից, սեփական կյանքի փորձից և այլն:

Խոսքային մեթոդների զարգացման գլխավոր հիմնական ուղղությունը դրանց ներուժի առավելագույն օգտագործումն է սովորողների մտավոր գործունեության կազմակերպման համար, ինչը պահանջում է ուսուցչից մեթոդի ներքին կողմի կառավարում: Դրան հասնելու համար անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել տրամաբանական գործողությունների եղանակներին՝ վերլուծություն, համադրում, համեմատում, համակարգում, ընդհանրացում: Խոսքային մեթոդներն անհրաժեշտ են որպեսզի աշակերտների մոտ ձևավորվեն հետևյալ **կարողությունները՝** կատարել դատողություն, արտահայտել սեփական միտքը, պատմել դիտարկված երևույթների մասին, կիսվել տպավորություններով և այլն, ինչը հիմք է հանդիսանում աշխարհագրության բովանդակության յուրացման համար:

Պատմելու մեթոդը կրում է նկարագրական բնույթ: Օրինակ՝ պատմվածք բնական երևույթների (լեռնաշխարհի, օվկիանոսների, ճահիճների և այլն), աշխարհագրական հայտնագործությունների, պետության, մշակույթի և այլնի մասին: Ուսուցիչը պատմվածքի մեջ առանձնացնում է օբյեկտի հատկություններն ու հատկանիշները, որոնց հիման վրա ձևավորում է պատկերացումները և սահմանում հասկացությունները: Պատմվածքը պետք է աշակերտի մոտ առաջացնի միտք, այսինքն հաղորդվող նյութի հասկացում, արթնացնի զգացմունքներ: Դրա համար ուսուցիչը ինքը պետք է լավ պատկերացնի օբյեկտի արտաքին հատկանիշներն ու նրա հատկությունները: Շատ կարևոր է պատմվածքի ընթացքում բացի հիմնական հատկանիշներից ընդգծել նաև երկրորդական, բայց յուրահատուկ ու վառ բնութագրող հատկանիշները, որոնք կարևոր են պատկերավոր մտածողության համար, (օր.՝ լեռների մասին ընդհանուր պատկերացումներ տալուց հետո ընդգծվում է լեռների շղթայաձև դասավորությունը լեռնաշղթաներում ու խառնիխուռն դասավորությունը լեռնաշխարհում, լեռնաշղթայի մասին ասում ենք՝ այն ձգված է . իսկ լեռնաշխարհի մասին՝ այն տարածված է...):

Պատմվածքի պատրաստման ընթացքում ուսուցիչը պետք է օգտագործի փաստացի գիտական նյութ, գիտահանրամատչելի և գեղարվեստական գրականության: Փաստացի նյութը հիմք է հանդիսանում հասկացության ձևավորման և պատճառահետևանքային կապերի բացահայտման համար,

գիտահանրամատչելի գրականությունը խորացնում է նյութի յուրացումը, իսկ գեղարվեստական գրականությունը լրացնում և ամբողջացնում է նյութի վերաբերյալ պատկերացումը (օր.՝ լեռնաշղթայի և լեռնաշխարհի վերաբերյալ անհրաժեշտ է ընթերցել գեղարվեստական գրականությունից դրվագներ, որոնք կլրացնեն և կհարստացնեն օբյեկտի մասին գիտական պատեկերացումները):

Առանձնացվում է պատմվածքի երկու տեսակ՝

1.**նկարագրական** – երբ հաղորդվում է գիտելիքների համա կարգ (օր. պատմվածքներ ճանապարհորդությունների, երկրի տնտեսության կամ մշակույթի մասին),

2.**տեղեկատվական կամ ցուցադրական** պատմվածք, երբ ստեղծվում է ռեալ պատկերացում կոնկրետ աշխարհագրա կան օբյեկտի վերաբերյալ (օր.՝ պատմվածք խաղաղօվ կիանոսյան ափամերձ գոտում գտնվող, Սան Ֆրանցիսքո և Սան Դիեգո քաղաքների մեջև՝ Սանսան մեգապոլիսի մա սին, կամ միջպետական մեգապոլիս՝ Փարիզ-Ամստերդամ Քյոլն եռանկյան շրջանի մասին):

Ուսուցչի բացատրությունը — նյութի շարադրման ապացուցողական ձևն է: Բացատրությունը կիրառվում է այն դեպքում, երբ պետք է ապացուցել այս կամ այն դրույթը, բացահայտել ուսումնասիրվող երևույթի առաջացման պատճառներն ու դրանց կապերը (օր.՝ հողմահարության պրոցեսի, մետամորֆային ապարների առաջացման բացատրությունը): Դասագործընթացում սովորաբար նկարագրող պատմությունն ու բացատրությունը սերտ փախկապակցվում են և կիրառվում են միասին (օր.՝ Սևանա լճի ծաղկման ընթացքը, արդյունքը, հեռանկարների կանխատեսումը, այս պատմում-բացատրությունը անհրաժեշտ է համալրել նկարներով և թվային տվյալներով), երկուսն էլ գրեթե միշտ ուղեկցվում են քարտեզի ցուցադրությամբ, դիտազննական պարագաների կիրառմամբ և զրույցով (օր.՝ «երկրակեղևը կազմող ապարները» թեման բացատրելիս ուսուցիչը պետք է ձեռքի տակ ունենա դրանց նմուշները և ցուցադրի այն (օր՝ մագմատիկ, գրանիտ, սիենիտ, բազալտ; նստվածքային՝ ավազաքար, քարաղ: մետամորֆային՝ կվարցիտ, մարմար):

Դաստիարակչական իմաստով բացատրության կարևոր դերը կայանում է նրանում, որ այն կարևոր միջոց է հանդիսանում աշակերտների մոտ աշխարհի նկատմամբ սեփական վերաբերմունք, դիալեկտիկամատերիալիստական աշխարհայացք ձևավորելու համար: Ուսուցիչն այստեղ հնարավորություն ունի շեշտադրելու առանձին հարցեր՝ աշակերտի միտքն անհրաժեշտ հունով տանելու իմաստով:

Բարձր դասարաններում կիրառվում է **դասախոսության մեթոդը:** Նվազում է պատմելու և բացատրելու դերը, փոխարենը ավելանում է դպրոցական դասախոսության դերը: Դասախոսությունը պահանջում է աշակերտից երկարատև ունկնդրում, տևում է 20-25 րոպե, իսկ մնացած ժամանակը տրամադրվում է հարց ու պատասխանին, ընդհանրացմանն ու եզրահանգմանը: Դասախոսությունը

տնտեսում է ժամանակն ու ավելի շատ ժամանակ թողնում ինքնուրույն աշխատանքի համար: Տնտեսական աշխարհագրության դասընթացում դասախոսությունը կիրառվում է, երբ անհրաժեշտ է տալ երևույթի ընդհանուր բնութագիր (օր. քաղաքական քարտեզի ձևավորման ակնարկ): Դասախոսությունից հետո նպատակահարմար է անցկացնել ինքնուրույն աշխատանք և ավարտել թեման ամփոփող կրկնությամբ): Աշակերտների իմացական ակտիվության բարձրացման նպատակով դասախոսության սկզբում պետք է ցույց տալ նրա տրամաբանական կառուցվածքը, գրատախտակին գրառել պլանը և հաղորդման ընթացքում առանձնացնել հիմնական մասերը: Դասախոսության ընթացքում հնարավոր է և ցանկալի առաջադրել պրոբլեմային հարցեր, որոնք բացատրության և ցուցադրման հետ զուգորդելով, հնարավորություն կտան ընդգծել ուսումնասիրվող նյութի հիմնական դրույթները:

Զրույցը ուսուցման եղանակ է, որում հիմնական տեղը զբաղեցնում են ուսուցչի հարցերը և աշակերտի պատասխանները կամ հակառակը: Հարցադրում կատարելով ուսուցիչը մղում է աշակերտին արտահայտել միտք՝ հիմնվելով արդեն ունեցած գիտելիքի վրա: Զրույցը նպաստում է աշակերտների մտքի ակտիվացմանը, հնարավորություն է տալիս զուգորդել նոր նյութի մատուցումը հնի կրկնության և ստուգման հետ: Զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է փոփոխել հարցերը՝ ըստ աշակերտների պատրաստվածության մակարդակի, դրա շնորհիվ ներգրավել ամենաթույլ աշակերտներին և միաժամանակ նյութի մեջ պահել միջին և ուժեղ աշակերտներին: Զրույցին նախապատրաստվելիս ուսուցիչը պետք է մանրակրկիտ մշակի դրա բովանդակությունը, կառուցվածքը, հարցերի հաջորդականությունը, (հարցերը պետք է տրամաբանորեն կապված լինեն և բխեն միմյանցից), հաշվի առնի դիդակտիկ պարագաների կիրառման հնարավորությունը, երկրամասագիտական գիտելիքների ու կարողությունների առկայությունը նյութի տեղայնացման նպատակով: Հետևաբար զրույցի մեթոդում ամենակարևորը հարցերի ճիշտ կառուցված համակարգն է՝ նյութի բովանդակությանը համապատասխան: Զրույցը, աշխարհագրության դասերին հաճախ զուգորդվում է քարտեզի կիրառմամբ: Կիրառվում են նաև այլ դիտազննական պարագաներ, վիճակագրական և գծակարգային տվյալներ:

Ըստ ուսումնական նպատակի՝ **զրույցները** լինում են **ներածական, բացատրական, կատեխիզական, ընդհանրացնող, պրոբլեմային, էվրիստիկ:**

Ներածական զրույցն անցկացվում է աշակերտների հիշողության մեջ գիտելիքների վերականգնման նպատակով, որոնք անհրաժեշտ են նոր նյութի ընկալման համար, այսինքն իր բնույթով վերհիշական է, (օր.՝ Աֆրիկայի կլիման ուսումնասիրելիս օրինաչափական է կլիմահասկացության կրնությունը զրույցի ձևով):

Բացատրական զրույցն իր բնույթով ուղղված է ուսումնասիրվող օբյեկտների կամ երևույթների էության ու փոխադարձ կապերի բացահայտմանը: Հարցերը պետք է հիմնվեն արդեն իսկ ձեռք բերած

գիտելիքի վրա և իրենց ուղղվածությամբ մղեն բացահայտելու նորը (օր.՝ «Աֆրիկայի կլիման, ներքին ջրերը» դասը բաղկացած է երկու մասից, որոնք սերտ փոխկապակցված են միմյանց հետ, երկու մասերն էլ ծավալուն են և ամբողջապես դժվարըմբռնելի, սրանց միջև պատճառահետևանքային կապը բացահայտելու համար անհրաժեշտ է անցում կատարել մեկից մյուսը, կլիմայից ներքին ջրեր, բացատրական զրույցի միջոցով):

Կատեխիզական զրույցի նպատակն է պարզել փաստացի ձեռք բերած գիտելիքների քանակն ու որակը, պահանջում է գիտելիքի պարզ վերարտադրում՝ առանց սեփական դատողությունների: Այն կատարվում է կարճ հարցերի և պատասխանների միջոցով նյութի մատուցումից հետո, (օր.՝ «դաս 10. Մարդն Աֆրիկայում», հարց՝ թվեք Աֆրիկայում բնակվող ժողովուրդների անվանումները, պատ. պիգմեյներ, բուշմեններ, հետենտոտներ, եթովպացիներ, մալագասիներ, կամ հարց՝ ե՞րբ աֆրիկյան պետությունների մեծ մասը ազատվեց գաղութացումից, պատ.՝ 1950-60-ական թվականներին), ինչպես նաև թեմայի ավարտին: Մեթոդի տեղն ընտրվում է կախված դիդակտիկական նպատակից:

Ընդհանրացնող զրույցը կիրառվում է աշակերտներին հետևության և եզրակացության հանգեցնելու համար: Աշխարհագրության դասընթացում այն կազմակերպվում է սովորաբար խոշոր թեմաների ուսումնասիրման ավարտին (օր՝ «Աֆրիկա» թեմայի ավարտին կազմակերպում ենք զրույց՝ հարցերում ընդգրկելով բոլոր այն հիմնարար գաղափարները, որոնք ձևավորվել են թեմայի ուսումնասիրման ընթացքում, այստեղ լայնորեն կիրառվում են դասագրքում զետեղված հարցերը):

Պրոբլեմային զրույցի նպատակն է ուղղորդող հարցերի միջոցով առաջ քաշել մի գաղափար, որի էությունը կթվա «առեղծվածային» աշակերտները պետք է գտնեն դրա բացահայտման ուրույն ճանապարհները, որոնք մինչ այդ «անհայտ են եղել գիտության համար»: Զրույցի այս տեսակը խթանում է սովորողների երևակայությունը և օգնում բացահայտել մտավոր ստեղծագործական ունակությունները (օր.՝ «ինչպիսին կլիներ Աֆրիկայի բնակլիմայական նկարագիրը, եթե իրագործվեր Անտարկտիդայից բերված սառույցներով Սահարա անապատի ոռոգումը»: Այս զրույցի ընթացքում սովորող ները պետք է հիմնվեն արդեն իսկ ձեռք բերված գիտելիքների վրա և կատարեն կանխատեսումներ՝ արտահայտելով նոր գաղափարներ, այսինքն՝ ստեղծագործեն): Պրոբլեմային զրույցի տեսակ է հանդիսանում նաև էվրիստիկ զրույցը:

Էվրիստիկ զրույցը (հուն. էվրիկա — ես գտա) առավել արդյունավետ է ստեղծագործական ինքնուրույնության արտահայտման համար այն հնարավորություն է տալիս առաջ քաշել խնդրահարույց մտքեր և տեսակետներ, գտնել նոր մտքեր, վարել բանավեճեր, կատարել ընդհանրացումներ և եզրահանգումներ: Էվրիստիկ զրույցի առանձնահատկությունը կայանում է նրա ինքնաբուխ էության մեջ, այն կարող է առաջանալ նաև չնախատեսված, երբ որևէ թեմայի շուրջ զրույցի ընթացքում աշակերտների մոտ առաջանում է նոր հարց և զրույցը ծավալվում է արդեն նոր ուղղությամբ (օր.՝

հարց.՝ իսկ որքա՞ն են կշռում Անտարկտիդայից բերվող այսբերգները, արդյոք նրանք չե՞ն հալչի՝ արևադարձային և հասարակածային ջրերում մինչ ցամաքին հասնելը և այլն): Էվրիստիկ զրույցը հնարավորություն է տալիս բացահայտել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները՝ մտքի արագությունը, մտածողության, խոսքի, հիշողության առանձնահատկությունները, առկա գիտելիքների մակարդակը, հետաքրքրությունները, մտահորիզոնի շրջանակները և այլն:

Բարձրաձայն ընթերցման մեթոդը պատկանում է խոսքային մեթոդների շարքին, կիրառվում է հիմնականում ցածր դասարաններում, երբ աշակերտները նոր են ծանոթանում աշխարհագրություն առարկայի «լեզվին» և աշխարհագրական մտքի արտահայտման ձևին: Հաճախ նոր և դժվար արտասանվող եզրույթները լսողության միջոցով սխալ են ընկալվում և հետագայում մտապահվում են աղավաղված, բարձրաձայն ընթերցանությունը լրացնում է այդ բացը և մշակում սովորողի «աշխարհագրական խոսքը»: Ցածր դասարաններում (4-5րդ. դաս.) բարձրաձայն ընթերցվում է դասի մեծ մասը և բացատրվում յորաքանչուր հատված, առաջարկվում է կրկնել կարդացածը դասագրքի բառերով, որոշ հատվածներ սովորել անգիր և նույնությամբ վերարտադրել: Բարձր դասարաններում մեթոդը նպատակահարմար է տեքստի որևէ խրթին հատվածի քննարկման և վերլուծության համար:

Աշխատանքը աշխարհագրության դասագրքի և վիճակագրական տվյալների հետ նույնպես դասվում է խոսքային մեթոդների շարքին, սակայն, պետք է նշենք, որ դրանց բնույթը երկակի է և որոշ մասնագետների կարծիքով՝ կախված կիրառման նպատակներից և զուգորդվող մեթոդներից (նշված մեթոդները կարող են համարվել նաև գործնական):

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԻՏԱԶՆՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Այս խմբի մեթոդները տարբերվում են զննականության միջոցների կիրառմամբ: Դիտազննական մեթոդներում գիտելիքների աղբյուրներ են հանդիսանում տարբեր ուսումնական պարագաները: Երբեմն դիտազննական պարագայի գործառույթ են կատարում երկրագիտական նյութերն ու մոդելները:

«Դիտազննական **մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործունեության համակարգված եղանակն է, որն իրականացվում է ցուցադրության միջոցով»:**

Դիտազննական մեթոդների շարքին են պատկանում ուսումնական նկարների, ցուցադրական աղյուսակների, էկրանային պարա գաների, մանկավարժական նկարների, քարտեզների և մոդելների կիրառման մեթոդները: Դիտազննական մեթոդների հիմնական **գործառույթը** ուսումնասիրվող օբյեկտի կամ երևույթի պատկերավոր կերպարի ստեղծումն է գիտակցության մեջ, աշխարհագրական

օբյեկտների վերաբերյալ պատկերացումների ձևավորումը (օր.՝ աէրո ֆոտոնկարի միջոցով պատկերացում ենք կազմում ծովային հոսանքի արտաքին տեսքի վերաբերյալ)։ Ուսուցիչը ցուցադրում է դիտազննական պարագաները, կազմակերպում է դրա ընկալումը աշակերտի կողմից, ղեկավարում է վերջիններիս մտավոր գործունեությունը, սովորեցնում աշխարհագրական ինֆորմացիայի ստացման նմանատիպ աղբյուրների հետ աշխատելու եղանակները։ Դիտազննական մեթոդների կիրառումը որոշիչ դեր է խաղում սովորողների մոտ դիտապատկերավոր մտածողության ձևավորման գործում, սրում է ընկալունակությունը, մշակում է դիտողականությունը, վարժեցնում է տեսողական հիշողությունը, նպաստում է անձի հուզականությանը։ Բազմատեսակ դիտազննական միջոցների ներկրումը ուսուցման գործընթաց նպաստում է ուսումնական նյութի առավել խոր ընկալմանը և առաջացնում է հետաքրքրություն աշխարհագրություն առարկայի նկատմամբ ընդհանրապես։ Աշխարհագրության ուսուցման գործընթացում դիտազննական մեթոդները առավել կարևոր են, քանզի հիմնված են զգայական իմացության վրա, իսկ զգայական իմացությունը ժամանակային առումով նախորդում է ռացիոնալ իմացությանը։ Սակայն զգայական իմացությունը լիովին ինքնուրույն հանդես չի գալիս, այն ուղեկցվում է խոսքով (օր.՝ «օղաձև կորալային կղզի» հասկացությունը ձևավորվում է նկարի ցուցադրման հիման վրա, որն ուղեկցվում է բանավոր բացատրությամբ, այսինքն կղզիների այս տեսակի մասին հասկացությունը ձևավորվում է պատկերացման հիման վրա)։ Տվյալ դեպքում դիտազննական մեթոդները հենք են հանդիսանում խոսքային մեթոդների համար։ Այս մեթոդները կարող են կիրառվել զուգահեռ կամ խոսքային մեթոդներից հետո (օր.՝ ուսուցիչը նկարագրում է բնական զոնան որից հետո ցուցադրում է զոնային բնորոշ լանդշաֆտի, առանձին բույսերի և կենդանիների տեսակների նկարը, հողերի տիպերի նմուշները և այլն)։ Այս պարագայում խոսքային մեթոդն է հենք հանդիսանում դիտազննական մեթոդների կիրառման համար։ Որոշ դեպքերում դիտազննական մեթոդները կարող են կիրառվել ինքնուրույն նոր գիտելիքի ձեռքբերման գործում։ Արդի ժամանակներում ստեղծվել են նոր և նորացված դիտազննական պարագաներ (ուսումնական ֆիլմեր, համակարգչային ծրագրեր, ցուցապաստառներ և այլն)։ Օրինակ «Հարավային Ամերիկայի խոնավ հասարակածային անտառները» ֆիլմի ցուցադրման նպատակը «հասարակածային մշտադալար անտառներ» հասկացության էական հատկանիշների բացահայտումն է։ Ֆիլմը դիտելուց առաջ ուսուցիչը առաջադրում է տեսանյութից և հաղորդավարի տեքստից ընտրել և դուրս բերել «հասարակածային մշտադալար անտառների» բնորոշ հատկանիշները։ Ֆիլմը դիտելուց հետո կազմակերպվում է զրույց, որի նպատակն է ստուգել նոր ձևավորված գիտելիքներն ու դրանց ընկալման որակը, բացահայտել և շտկել ընկալման մեջ տեղ գտած աղավաղումները։ Դիտազննական մեթոդների կիրառման անհրաժեշտ նախադրյալ է համարվում սովորողների կողմից դիտազննական միջոցների հետ աշխատելու եղանակների տիրապետումը։ Աշակերտներին պետք է ծանոթացնել նկարի նպատակային ընկալման հնարներին (սովորեցնել կարդալ նկարը), ֆիլմի, մանրակերտի, բնական օբյեկտի ընկալման և

գիտակցման հնարներին: Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում կա «ոսկյա օ րենք»՝ գիտելիքի ստացման յուրաքանչյուր նոր աղբյուր սկզբում ինքը պետք է դառնա հատուկ ուսումնասիրման օբյեկտ: Օրինակ՝ ուսուցման գործընթացում հաճախ բարդություններ են առաջանում սխեմաների հետ աշխատելու ընթացքում, սովորողները դժվար են հասկանում սխեմայի կառուցվածքն ու նրանում երևույթի պատկերման եղանակները, այդ իսկ պատճառով՝ սխեմայի դիդակտիկական հնարավորությունները լիարժեք չեն իրացվում: Սխեմայի հետ աշխատանքն արդյունավետ կլինի միայն այն դեպքում, երբ աշակերտները տիրապետեն դրա հետ աշխատելու եղանակներին ու հնարներին: Այս հնարի էությունը հետևյալն է՝ 1) կարդալ սխեմայի վերնագիրը և բացահայտել կառուցման առանձնահատկությունները;

2) պարզաբանել օբյեկտի, երևույթի պատկերման եղանակները, կապերը: 3) որոշակիացնել, թե ինչ նորություն կարելի է իմանալ սխեմայից: Այսպիսի մոտեցման պայմաններում, երբ աշակերտները յուրացնում են այս կամ այն դիտազննական պարագայի կառուցվածքային առանձնահատկությունները, նրանք կարող են ինքնուրույն աշխատել տվյալ աղբյուրի հետ և կարող են կատարել նաև ուսուցչի հանձնարարությունն ու ինքնուրույն ստեղծել նմանատիպ սխեմա, որում ցույց կտան որևէ օբյեկտի կամ երևույթի կառուցվածքն ու կապերը, այսինքն ինքնուրույն կստեղծեն նոր դիտազննական պարագա:

Դիտազննական մեթոդների կատարելագործման գլխավոր ուղղությունը աշակերտների գործունեության կազմակերպումն է ինքնուրույնության տարբեր մակարդակներում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Այս մեթոդներում գիտելիքների ստացման գլխավոր աղբյուր են հանդիսանում աշխարհագրական իրականությունը (բնական և հասարակական) ու նրա մոդելները (քարտեզներ, պրոֆիլներ, գրաֆիկներ, մանրակերտեր և այլն): Ուսուցման գործընթացում կիրառվում են աշխարհագրական իրականությունն արտացոլող մոդելներ, որոնք ներկայացված են հատուկ մշակված ուսումնական պարագաների ձևով: Աշխարհագրության դասերին հաճախ մոդելներ են պատրաստում հենց իրենք, աշակերտները, նրանք գծում են տեղանքի պլան, կատարում են դիտարկումներ և ստացված տվյալների հիման վրա կառուցում հատակագիծ, գրաֆիկներ ու դիագրամներ, թվային տվյալներով կատարում հաշվարկներ (օր.՝ գետի հոսքի արագություն, անկում, ծախս և այլն):

Գործնական մեթոդները ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործողություններ են, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները.

1. ուսուցիչը ձևակերպում է խնդիրը ու կազմակերպում աշակերտի գործունեությունը, որն ուղղված է քարտեզի, նկարի, մոդելի կամ այլ օբյեկտի հետ նախատեսվող աշխատանքի եղանակների յուրացմանը

(օր.՝ ծանոթացնել քարտեզի «գունային լեզվին», որից հետո որոշել տարբեր վայրերի ռելիեֆի ձևերը՝ ըստ գունային ֆոնի):

2. ուսուցիչը առաջադրում է խնդիր, որի լուծման համար պետք է օգտվել քարտեզից, նկարից, մոդելից կամ այլ օբյեկտից՝ կիրառելով աշխատանքի՝ արդեն իսկ յուրացված եղանակները. ձեռք բերել նոր գիտելիք (օր.՝ քարտեզի «գունային լեզվի» և «գունային սանդղակի» օգնությամբ որոշել երկրի մակերևույթի տարբեր մասերի բացարձակ և հարաբերական բարձրությունները):

Գործնական մեթոդների շրջանակներում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում, առաջատար է աշակերտի դերը:

«Գործնական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործունեության համակարգված եղանակն է, որն իրականացվում է սովորողի ինքնուրույն ակտիվ գործողության միջոցով»:

Այսպիսով՝ գործնական մեթոդների էությունն այն է, որ ուսուցչի օգնությամբ աշակերտները սովորեն ձեռք բերել նոր գիտելիք ուսուցման միջոցներից (օր.՝ քարտեզից, ֆիլմերից) և դրանց օգնությամբ (օր.՝ համադրել ֆիզիկական ու տեկտոնական քարտեզները, ժամանակակից ռելիեֆի և երկրակեղևի կառուցվածքի միջև փոխադարձ կապերի բացահայտման նպատակով):

Գործնական մեթոդները մեծ դեր են խաղում այնպիսի կարողությունների ձևավորման գործում, որոնք անհրաժեշտ են սովորողի ինքնուրույն իմացական գործունեության զարգացման համար և կիրառելի են առօրյա կյանքում (օր.՝ թվային տվյալների վերլուծությունը, կառուցողական ունակությունները, ուսուցման տեխնիկական միջոցների հետ աշխատելու և դրանցից գիտելիք քաղելու կարողությունը և այլն): Գործնական մեթոդները նաև արդիականացնում են դպրոցական աշխարհագրություն առարկան և մատնանշում նրա կիրառական նշանակությունը: Գործնական մեթոդների շարքին են պատկանում օբյեկտների և երևույթների դիտարկումը բնության մեջ, արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում: Այս մեթոդները նպաստում են աշխարհագրական գիտելիքների կիրառմանը՝ հասարակական կյանքում և աշխատանքի տարբեր ոլորտներում (մթնոլորտային երևույթների կանխատեսում, հեղեղատների և խանդակների առաջացման պատճառների կանխատեսում, ջրամբարների աղտոտման դեմ պայքարի ուղիների որոնում և այլն): Իրականում, գործնական մեթոդները պատրաստում են աշակերտներին տարբեր մասնագիտություններում իրենց դրսևորելուն: Գործնական մեթոդների լայն կիրառման համար անհրաժեշտ է համապատասխան նյութական բազա՝ կահավորված աշխատատեղ, սարքերի և սարքավորումների առկայություն տեղանքի հանույթն իրականացնելու համար (պլանշետ, կողմնացույց, չափաժապավեն և այլն), աշխատանքային տետրեր, պրակտիկումներ, ատլասներ, հանձնարարականներ, տեղանքի նկարագրման և բնութագրման պլան, տեղեկատուներ և աշխարհագրական տեղեկատվական այլ աղբյուրներ: Գործնական մեթոդների իրացման հարցում մեծ դեր ունեն **գործնական աշխատանքները,** որոնք կատարվում են դասարանում,

տեղանքում, արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում: **Գործնական աշխատանքները՝** աշակերտի ուսուցման կազմակերպման ձև են: **Ուսուցողական գործնական** աշխատանքները կատարվում են ուսուցչի ղեկավարությամբ: Ուսուցիչը բացատրում է գործողությունների հերթականությունը, ցույց է տալիս կատարման օրինակը և հանձնարարում առաջադրանքը, որը ենթադրում է գործողության վերարտադրումն ու մտապահումը, այսինքն ուղղված է գործողության եղանակի յուրացմանն ու կարողության ձևավորմանը (օր.՝ «կետի աշխարհագրական կոորդինատների» որոշումը: Գտնել Ամստերդամի, Տորոնտոյի, Մելբուրնի աշխարհագրական լայնությունները, գտնել Մադրիդի, Մագադանի, Լա Պասի աշխարհագրական երկայնությունները, որից հետո, գտնել Քեյփթաունի, Օսլոյի, Կերգելեն կղզիների աշխարհագրական կոորդինատները): **Վարժեցնող գործնական** աշխատանքները ուղղված են կարողության ամրապնդմանն ու կատարելագործմանը, ինչը կհանգեցնի հմտության ձևավորմանը, այսինքն գործողության ավտոմատացմանը (օր.՝ ինքնուրույն ընտրել Աֆրիկա մայրցամաքից երեք տեղանուն և որոշել դրանց աշխարհագրական կոորդինատները, որից հետո կրկնել նույն առաջադրանքը մյուս մայրցամաքների հետ): Այսինքն, ուսուցիչն առաջադրում է կետի աշխարհագրական կոորդինատների որոշմանն ուղղված տարատեսակ աշխատանքներ, որոնք պահանջում են յուրացված կարողության բազմակի կրկնություն և հանգեցնում հմտության ձևավորման: **Ամփոփիչ գործնական** աշխատանքները ուղղված են կարողությունների և հմտությունների յուրացման որակի ստուգմանն ու դրանց կիրառմանը նոր պայմաններում (օր.՝ նավը գտնվում է հվ. լայն. 40° և արվ. երկ.15° կետում և օգնություն է խնդրում, մոտակա երկու նավերը գտնվում են՝ 1-ին-ը հվ. լայն. 20° և արմ. երկ. 5° -ում, իսկ 2-րդը հվ.լայն. 40° և արվ. երկ. 90° -ում; հարց. ո՞ր նավը ավելի շուտ կհասնի օգնության: Աշակերտի գործողությունը՝ գտնել նավերի տեղը քարտեզի օգնությամբ, չափել հեռավորությունը, արտահայտել կիլոմետրով կամ ծովային մղոնով և պատասխանել հարցին):

Գործնական մեթոդների կիրառումը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ սովորողները տիրապետում են ուսումնական աշխատանքի այնպիսի հնարներին, որոնք ընկած են աշխարհագրական կարողությունների և հմտությունների հիմքում: Գիտելիքի աղբյուրից տեղեկություն կորզելու համար, պետք է հասկանալ նրանում պարունակվող աշխարհագրական տեղեկության առանձնահատկությունը: Օրինակ, քարտեզով աշխատել կարողանալու համար, պետք է սկզբում կարողանալ այն բնութագրել (անվանումը, բովանդակությունը, ընդգրկված տարածքը, մասշտաբը, պայմանանշանները), որից հետո նոր աշակերտները կկարողանան դրանից կորզել տեղեկություններ: Այսպիսով, քարտեզը սկզբում հանդիսանում է ուսումնասիրման առարկա, հետո նոր գիտելիքի ստացման աղբյուր: Մեթոդիկայի այս «ոսկե օրենքը» կիրառվում է ամեն անգամ, երբ աշակերտը հանդիպում է գիտելիքի ձեռք բերման նոր աղբյուրի: Աշխարհագրության ուսուցման ընթացքում գործնական մեթոդները կիրառվում են դիտազննական և խոսքային մեթոդներին զուգահեռ:

Դպրոցական աշխարհագրության բովանդակության արդիականացման պայմաններում գործնական մեթոդների դերն ավելանում է, դրանք նպաստում են տեսության և պրակտիկայի կապի ամրապնդմանը, նպաստում են հայրենագիտական գիտելիքների արդյունավետ ձեռքբերմանը և նախապատրաստում սովորողներին ինքնուրույն կյանքի:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ

Ուսուցման **նպատակները, բովանդակությունը և մեթոդները** դիդակտիկայի ու մեթոդիկայի հիմնական և առավել ընդհանուր կատեգորիաներն են: Դրանք սերտ փոխկապակցված են միմյանց հետ և պատմության ընթացքում ենթարկվում են փոփոխության: Հանրակրթական դպրոցի այն նպատակները, որոնք այսօր թելադրում է հասարակությունը, բերում են ուսուցման բովանդակության փոփոխության, որն էլ իր հերթին հանգեցնում է ուսուցման նոր մեթոդների ակտիվ որոնումների անհրաժեշտության: Հասարակությունը դպրոցից պահանջում է շրջահայաց, զարգացած, ստեղծագործական մտածողությամբ օժտված քաղաքացու պատրաստում, ինչը հնարավոր է իրականացնել միայն զարգացնող ուսուցման եղանակով և համապատասխան ուսուցման մեթոդներով:

Զարգացնող ուսուցման գաղափարները իրականացնելու նպատակով 20-րդ դարի 70-ական թթ. Լեոնների և Սկատկինի կողմից մշակվեց ուսուցման մեթոդների նոր դասակարգում, որը հաշվի է առնում աշակերտի իմացական գործունեության բնույթը տարբեր տարիքում: Այս գաղափարները այսօր լայն կիրառում են ստացել դպրոցում և հիմք հանդիսացել ուսուցման գործընթացի կազմակերպման համար: Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում, ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի, մեթոդները միավորվում են երկու խոշոր խմբերի մեջ՝

1. բացատրացուցադրական (բացատրացուցադրական, ռեպրոդուկտիվ կամ վերհիշական);
2. ստեղծագործական (պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական և հետազոտական մեթոդներ):

Խմբավորման հիմքում ընկած են հետևյալ չափանիշները՝ ուսուցման նպատակները, աշխարհագրական կրթության բովանդակությունը և իմացական գործընթացի առանձնահատկությունները:

Առաջին խումբը ներառում է մեթոդներ (բացատրացուցադրական, ռեպրոդուկտիվ կամ վերհիշական), որոնք ուղղված են պատրաստի տեղեկության փոխանցմանը աշակերտին, դրանց նպատակն է

գիտելիքների, կարողությունների, հմտությունների և աշխատաձևերի որոշակի ծավալի յուրացումը աշակերտի կողմից:

Երկրորդ՝ ստեղծագործական մեթոդների խումբը (պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական), որն ուղղված է անձի ստեղծագործական գործունեության փորձի, ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու մտածողության զարգացմանը:

Այս մեթոդները մեծապես արտացոլում են ուսուցման պրոցեսի կազմակերպման ժամանակակից պահանջները, քանի որ ավելացնում են սովորողի ինքնուրույնության մասնաբաժինը, խթանում սովորողների իմացական ակտիվությունը, հնարավորություն են տալիս սովորողին ունենալ սեփական կարծիք ու դիրքորոշում, զարգացնում են նրա մոտ կանխատեսելու, պլանավորելու և ստեղծագործելու ունակությունը:

ԲԱՑԱՏՐԱՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Բացատրացուցադրական մեթոդը կիրառվում է ուսուցչի կողմից ուսումնական ինֆորմացիայի փոխանցման ընթացքում: Ուսուցիչը բացատրում է, իսկ աշակերտը մտապահում և վերարտադրում է գիտելիքը այն տեսքով, ինչպես որ մատուցել է ուսուցիչը: Մեթոդի շրջանակներում ուսուցման առավել ընդունված մեթոդական հնարներն են՝ **բացատրությունը, պատմելը (քարտեզի ցուցադրությամբ), բարձրաձայն ընթերցումը, դասագրքի նյութի վերապատմումը, աղուսակային տվյալների որոնումը:** Այս մեթոդի օգնությամբ ուսուցիչը ձևավորում է սովորողների գիտելիքների հիմնական պաշարը, որի հիմքի վրա հետագայում կազմակերպվում են ինքնուրույն աշխատանքները: Ուսուցիչը փոխանցում է գիտելիքը, սովորողները յուրացնում են ինֆորմացիան՝ լսում են, կարդում են, դիտում են, մտապահում են, որից հետո պարզ վերարտադրում են պատրաստի ինֆորմացիան: Հետևաբար, այս մեթոդի շրջանակներում աշակերտի ուսումնական գործընթացն իրականանում է առանց ստեղծագործական մոտեցման, և ցածր է նրանց ինքնուրույնության աստիճանը: Այս մեթոդն անհրաժեշտ է կիրառել նոր ընդհանուր հասկացությունների ձևավորման ընթացքում (կլիմայական գոտի, արեգակնային էներգիա, արտադրություն, մասնագիտացում և այլն): Բացատրացուցադրական մեթոդը գիտելիքների փոխանցման ամենադյուրին մեթոդն է, իսկ ժամանակի իմաստով՝ առավել տնտեսողը, քանի որ կարճ ժամանակահատվածում հնարավոր է փոխանցել գիտելիքներրի մեծ ծավալ: Տնտեսական և սոցիալական աշխարհագրության շրջանակներում այս մեթոդը կիրառվում է ամբողջական թեմաների համալիր ներկայացման նպատակով, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսաաշխարհագրական բնութագիրը», «Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը» և այլն: Ուսումնական տեղեկատվությունը կարելի է փոխանցել ոչ միայն բանավոր խոսքի, այլև տեխնիկական միջոցների օգնությամբ: Ժամանակակից դպրոցի

ուսումնական աշխատանքներում առաջնայնությունը տրվում է բացատրությանը՝ փոքր-ինչ նվազեցնելով պատմելու և նկարագրելու դերը: Ուսուցչի բացատրությունը (բացատրական խոսքը) պետք է լինի գիտական տրամաբանության օրինակելի նմուշ, լինի ոչ հակասական և կրի ապացուցողական բնույթ: Բացատրացուցադրական մեթոդը կիրառվում է ոչ միայն տեսական գիտելիքի փոխանցման նպատակով, այլև նրա միջոցով ձևավորվում են աշխարհագրության ուսուցման մեջ կիրառվող բազմաթիվ հնարներ՝ քարտեզի ընթերցում, գծակարգի վերլուծում, աշխարհագրական նկարագրության և բնութագրի կազմում և այլն: Այսպիսի աշխատանքները պետք է ուղեկցվեն պլանի, սխեմայի, աղյուսակի կազմմամբ, որպեսզի հիմնավորեն ներկայացվող նյութի տրամաբանությունը և ապահովեն ընկալման ամրությունը: Բացատրացուցադրական մեթոդը նպատակահարմար է լայնորեն կիրառել նաև ցածր դասարաններում:

ՎԵՐՀԻՇԱԿԱՆ ԿԱՄ ՌԵՊՐՈԴՈՒԿՏԻՎ ՄԵԹՈԴ

Վերհիշական կամ ռեպրոդուկտիվ մեթոդի **նպատակը** գիտելիքի կրկնության, ամրապնդման և վերահսկման իրականացումն է, իսկ քանի որ վերհիշել կամ վերծանել կարելի է միայն այն, ինչ լսել ես, տեսել ես, կարդացել ես, ապա այս մեթոդը կիրառվում է բացատրացուցադրական մեթոդի հենքի վրա: Վերհիշական մեթոդի գլխավոր **հատկանիշը** գործունեության եղանակի կրկնությունն ու վերարտադրումն է ուսուցչի հանձնարարությամբ: Վերհիշական մեթոդը **ձևավորում և ամրապնդում է** աշխարհագրությանը հատուկ կարողություններ և հմտություններ: Ուսուցչի դերը, այս մեթոդի շրջանակներում այն է, որ, հանձնարարելով առաջադրանքը, կարողանա կազմակերպել աշակերտների կողմից նյութի կիրառման և կրկնութ յան բազմատեսակ եղանակներ: Աշակերտները իրենց գործողությունները կատարում են ըստ նմուշի, դատողությունների տրամաբանությունը թելադրվում է պլանով և հանձնարարականներով: Վերհիշական մեթոդի **էությունն է** սովորեցնել աշակերտներին կիրառել ստացվող նոր գիտելիքներն արդեն ծանոթ ուսումնական իրավիճակում (աշխատանք տիպային պլանի հետ) կամ նոր գիտելիք ձեռք բերելու համար: Վերհիշական մեթոդում մեծ տեղ է գրավում աշխատանքը տիպային պլանի և քարտեզի հետ: Սովորողներին տրվում է գետերի, լճերի, լեռնաշխարհների, բնական զոնաների, առանձին պետությունների բնութագրերի պլանը: Բացի այդ, ուսուցիչը պետք է տա պլանի կատարման հրահանգներ (որտեղից գտնել հարցի պատասխանները, ինչ աղբյուրներից օգտվել, ինչպես աշխատել դրանց հետ): Դասարանից դասարան տիպային պլանները բարդեցվում են: Օրինակ՝ եթե 6-րդ դասարանում գետի բնութագիրը պարունակում է հետևյալ հարցերը՝

1. գետի անվանում;

2. գետի հոսքի ուղղությունը:

3. գետի ակունք (աշխ-ական կոորդինատներ, տեղանքի անվանում);

4. տեղանքի բնույթը (հարթավայր, լեռներ և այլն);

5, վտակներ;

6. գետաբերան (աշխ-ական կոորդինատներ, տեղանքի անվան

նում):

Ապա 7-րդ դաս. այս տիպային պլանում ավելանում են հարց՝

7. կլիմայի ազդեցությունը գետային ռեժիմի վրա;

8. գետի տնտեսական նշանակությունը և այլն:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ վերհիշական կամ ռեպրոդուկտիվ մեթոդը սովորեցնում է աշակերտներին կիրառել գիտելիքներն ու կարողությունները նորովի, բայց ծանոթ իրավիճակում և կատարել գործողություններ՝ ըստ առաջարկված նմուշի:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Վերջին ժամանակներում աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտների իմացական հետաքրքրասիրության զարգացման նպատակով դպրոցական ուսուցման շրջանակներում ակտիվորեն սկսվեց կիրառվել պրոբլեմային ուսուցման մեթոդը: Այս հարցով խորապես զբաղվել է Մ.Ի.Մախմուտով և ստեղծել մի ստվարածավալ աշխատություն, որը կոչվել է «Պրոբլեմնոյե օբուչենիե»: Նրանում ներկայացված է հարցի խորը ուսումնասիրումն ու վերլուծությունը: Պրոբլեմային ուսուցումը յուրահատուկ տեղ է զբաղեցնում դպրոցական կրթության մեջ և ներառում է մի շարք մեթոդներ՝ **պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական:** Դրա հետ մեկտեղ պրոբլեմային ուսուցման համար ընդհանուր են հանդիսանում պրոբլեմային իրավիճակների ստեղծումը, պրոբլեմային առաջադրանքներն ու հարցերը և ուսումնական պրոբլեմների լուծումը: Էությունը այն է, որ նոր նյութի շարադրման և հետագա ամրապնդման ընթացքում առաջարկվում են հանձնարարություններ, որոնց կատարման նպատակն է աշակերտների մոտ ամրապնդել նախկինում ստացած գիտելիքների կիրառման ունակությունը: Սովորողների առջև դրվում է խնդիր, որոնք նրանք

պետք է լուծեն ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ, գտնեն լուծման եղանակները կամ արդեն ունեցած գիտելիքների կիրառման եղանակները նոր պայմաններում: Հակասությունները արդեն ունեցած գիտելիքների և նոր հանձնարարությունների միջև պետք է հաղթահարեն ինքնուրույն մտային և գործնական գործողություններով, որոնք կունենան ստեղծագործական բնույթ: Ստեղծվում է **պրոբլեմային իրավիճակ** — հոգեբանական վիճակ է, որում աշակերտը մտավոր բարդություն է ունենում ուսումնական խնդրի լուծման ճանապարհին: Պրոբլեմային իրավիճակը սովորաբար ստեղծում է ուսուցիչը (բայց հնարավոր է որ այն ստեղծի նաև սովորողը): Աշխարհագրության ուսուցման շրջանակներում առանձնացվում է պրոբլեմային իրավիճակի ստեղծման երեք տեսակ (ըստ Ա.Մ. Մատյուշկինի):

Առաջին տեսակ – իրավիճակ, երբ խնդրի լուծման համար գիտելիքներն անբավարար են, կամ խնդրի պայմանները բովանդակում են ոչ լիարժեք տեղեկություն: Գիտելիքների անբավարարության գիտակցումը ստեղծում է նոր գիտելիք ձեռք բերելու պահանջմունք (օր.՝ «ՀՀ վերընթաց լանդշաֆտային գոտիականությունը» թեման ուսումնասիրելիս վերհիշում ենք, որ բնական զոնաները աշխարհում ունեն լայնակի տարածում՝ կապված կլիմայական գոտիների տարածման հետ: Մինչդեռ, Հայաստանում պատկերն այլ է, նույն լայնության վրա տարածվում են տարբեր բնական զոնաներ: Առաջանում է հակասություն ունեցած գիտելիքի և նոր փաստերի միջև: Հակասության խորացման և իրավիճակի սրման նպատակով ուսուցիչը պատրաստի չի մատուցում «ուղղաձիգ գոտիականություն» հասկացության էությունը, այլ կատարում է համեմատություններ, մատնանշում նմանություններն ու տարբերությունները՝ ցույց տալով, որ կա մի նոր միտք, որն աշակերտը պետք է գտնի, դրանով իսկ ստեղծում է պրոբլեմային իրավիճակ):

Երկրորդ տեսակ — երբ առկա գիտելիքներից ընտրվում են նրանք, որոնք անհրաժեշտ են խնդրի լուծման համար: Օրինակ՝ աշակերտների առջև խնդիր է դրվում բացատրել, թե ինչու է Եվրասիայի հյուսիս-արևելքում տունդրայի զոնան ընդարձակվում: Աշակերտներն ունեն բոլոր անհրաժեշտ տվյալները, սակայն պետք է ընտրեն այն բնակլիմայական տարրերը, որոնց միջև պետք է փնտրեն կապերը (կլիմա-ռելիեֆ, համադրման համար նրանք օգտվել են «ֆիզիկական», «կլիմայական գոտիներ և բնական զոնաներ» քարտեզներից):

Երրորդ տեսակ — երբ աշակերտները պետք է գիտելիքները կիրառեն նոր իրավիճակում: Օրինակ՝ աշակերտներն արդեն ծանոթ են վերընթաց գոտիականությանը, ծանոթ են դրա առաջացման պատճառներին Հայաստանի օրինակով և պետք է բացատրեն նույն երևույթը Կիլիմանջարոյի կամ Ալպյան լեռների համար: Այստեղ նրանք պետք է բացատրեն վերընթաց գոտիականության տարբերությունը տարբեր լեռների համար: Ուսումնական պրոբլեմները աշխարհագրության դասընթացում կախված են ուսումնասիրվող նյութի բովանդակությունից. այստեղ կարևորվում է պրոբլեմային առաջադրանքների համակարգը:

Պրոբլեմային առաջադրանքներ: Տարբերվում են պրոբլեմային առաջադրանքների հետևյալ տեսակները. առաջադրանքներ՝

1. որոնք պահանջում են աշխարհագրական օրինաչափությունների ուսումնասիրում (օր.՝ բացատրել, թե արևափայլի նույն պայմաններում ինչո՞ւ է լեռան ստորոտում ավելի տաք, քան գագաթին, որն արեգակին ավելի մոտ է գտնվում);
2. որոնք ուղղված են բնական երևույթների խորացված ուսումնասիրմանը (օր.՝ ինչո՞ւ է Վ.Դոկուչաևը հողն անվանել լանդշաֆտի հայելին: Այստեղ աշակերտը պետք է գտնի խոր կապ բնության բաղադրիչների միջև):
3. որոնց կատարման արդյունքում ծանոթանում են աշխարհագրական գիտության ժամանակակից խնդիրներին (օր՝ հաշվի առնելով որևէ տարածքի բնակլիմայական պայմաններն ու բնական պաշարները՝ առաջարկեք նրանում կազմակերպվող տնտեսության մոդելը սեփական տեսանկյունից)
4. որում ծանոթանում են աշխարհագրական հետազոտությունների մեթոդներին (օր.՝ ուրվագծային քարտեզի վրա նշեք բոլոր այն վայրերը, ուր այցելել եք ամառային արձակուրդների ընթացքում՝ պայմանանշաններով ցույց տալով տրանսպորտի տեսակը, երկարատև, կարճատև հանգրվանությունը, ուր եղել եք առաջին անգամ, բազմակի անգամներ և հեռանկարում ուր կուզենայիք այցելել (քարտեզագրման մեթոդ);
5. որոնք կապված են աշխարհագրական գիտելիքների կիրառ ման հետ գործնականում (օր.՝ ամպերի տեսակների որոշումը և դրանցից առաջացող տեղումների հավանականությունը):
6. որոնք կապված են երկրի խնդիրների և բնական ռեսուրսների վերականգնման հետ, բնության նկատմամբ վերաբերմունքի հետ, օրինակ բնական ռեսուրսների սակավություն կամ «թվացյալ» առատություն, ինչպես է պետք օգտվել դրանցից (օր.՝ քանի սերունդ ՀՀ-ում ապահովված կլինի մոլիբդենի պաշարներով, եթե պահպանվեն նրա կորզման ժամանակակից տեմպերը): Պրոբլեմային առաջադրանքի ձևակերպման և ուսումնական խնդրի լուծման ընթացքթում ուսուցիչը կարող է կիրառել բազմատեսակ մեթոդական հնարներ (բանավոր շարադրանք, զրույց, քարտեզագրում, փորձ, դիտարկում և այլն): Ուսումնական պրոբլեմների լուծումը պրոբլեմային մեթոդներով կազմակերպված ուսուցման գործընթացում բաղկացած է 4 փուլերից.

1. պրոբլեմային իրավիճակի ստեղծում և պրոբլեմի գիտակցում
2. վարկածի ձևակերպում
3. վարկածի ստուգման և ապացուցման եղանակների որոնում
4. պրոբլեմի լուծում

Աղյուսակ 3

Աշխարհագրական հիմնախնդրի լուծման եղանակն ըստ Էվերսոնի



Պրոբլեմային շարադրանքի մեթոդ: Մեթոդի նպատակն է ցույց տալ աշակերտին իմացության բարդ ուղին, ճշմարտության պարզաբանման ճանապարհը, որևէ բարդ հարցի ապացուցողական լուծման նմուշը: Ուսուցիչն ինքն է առաջադրում հարցը և ինքն էլ՝ լուծում խոսքի շարադրման ընթացքում բացահայտելով հետազոտության տրամաբանությունը: Աշակերտները հետևում են դատողությունների ընթացքին, սովորում են կատարել այնպիսի տրամաբանական գործողություններ, որոնց օգնությամբ լուծվում է խնդիրը (օր.՝ երկրի գնդաձևության գաղափարի առաջացումն ու ապացուցումը ուսուցիչը ներկայացնում է ոչ թե ինչպես իրողություն, այլ շարադրում է մտքի առաջացման ողջ ընթացքը, նախադրյալները, հուշող դատողություններ, բոլոր կասկածներն ու ապացույցները, հայտնագործության պատմական ժամանակաշրջանի շունչն ու ազդեցությունը գաղափարի զարգացման վրա և այլն, այսինքն քայլ առ քայլ անցնում է աշակերտների հետ հայտնագործման ճանապարհը): Պրոբլեմային

շարադրանքի մեթոդը միջանկյալ տեղ է զբաղեցնում վերհիշական և մասնակի որոնողական մեթոդների միջև և կիրառվում է թե՛ ինքնուրույն, թե՛ այս կամ այն մեթոդի շրջանակներում:

Մասնակի որոնողական մեթոդ: Այս մեթոդի նպատակն է աստիճանաբար մոտեցնել սովորողին ստեղծագործական աշխատանքին: Եթե վերհիշական մեթոդը սովորեցնում է գործել նմուշով, տիպային պլանով, ապա մասնակի-որոնողական մեթոդը սովորեցնում է ցուցաբերել ստեղծագործական մոտեցում: Մասնակի-որոնողական մեթոդը կառուցվում է սովորողի առկա գիտելիքների՝ պաշարի հիման վրա և իրականացվում պրոբլեմային և ստեղծագործական առաջադրանքների միջոցով, որոնց կատարման եղանակը նախապես աշակերտներին հայտնի չէ: Մեթոդի խնդիրն է սովորեցնել աշակերտին կատարել ինքնուրույն առանձին քայլեր իմացության ամբողջական գործընթացում: Առաջարկում է սովորողին ուսումնական նյութի որոշ հատված գտնել և յուրացնել ինքնուրույն: Ուսուցչի խնդիրն է՝ մասնակի-որոնողական մեթոդը կիրառելով՝ սովորեցնել աշակերտներին ոչ միայն կիրառել ձեռք բերած գիտելիքները, այլև կատարել նոր գիտելիքի որոնում: Մեծ դեր է խաղում այս մեթոդի շրջանակներում էվրիստիկ զրույցը, որը բաղկացած է մի շարք փոխկապակցված հարցերից: Նրա բովանդակությունը և հարցերի հերթականությունը պետք է լավ մտածված լինեն ուսուցչի կողմից, որպեսզի աշակերտները կարողանան ինքնուրույն լուծել առաջարկված իմացական խնդրի առանձին մասերը: Էվրիստիկ զրույցը կարելի է կառուցել գործնական աշխատանքների արդյունքների հիման վրա քարտեզագրական, վիճակագրական տվյալներով աշխատելիս, արդյունավետ է նրա կիրառումը կինոդիտումների հիման վրա: Այսպիսով՝ մասնակի՝ որոնողական մեթոդը նախապատրաստում է սովորողներին ինքնուրույն ստեղծագործական գործունեության, բայց լիովին այն ապահովել չի կարող: Ստեղծագործական գործունեության լիարժեք ապահովումն արդեն հետազոտական մեթոդի գործառույթն է:

Հետազոտական մեթոդ: Այս մեթոդի կիրառման շրջանակներում աշակերտներն ինքնուրույն ուսումնասիրում են իրենց համար լիովին նոր նյութը ինքնուրույն: Ուսուցչի կողմից առաջադրված խնդիրը հնարավորություն է տալիս աշակերտին կրկնել գիտնականի անցած ճանապարհը՝ գիտակցաբար կիրառելով հետազոտության ընդհանուր գիտական և բուն աշխարհագրական մեթոդները: Հետազոտական մեթոդը գլխավորապես կոչված է ձևավավորելու սովորողի մոտ ստեղծագործական մտածողությունն ու գործելակերպը, որն իրականացվում է նոր նյութի ինքնուրույն ուսումնասիրման միջոցով: Իրականում՝ հետազոտական մեթոդը՝ հազվադեպ է կիրառվում, ինչը բացատրվում է մի շարք պատճառներով՝ այն ժամանակատար է, պահանջում է մեծածավալ նախապատրաստական աշխատանք, ու սուցման բազմատեսակ միջոցներ (տեղեկատուներ, հանրագիտարաններ, ատլասներ, գրականություն և այլն): Դրա հետ մեկտեղ հետազոտական մեթոդի մեթոդիկան դեռ թույլ է մշակված, բացակայում են դրա կիրառման հանձնարարականները: Չնայած դժվարություններին՝ աշխարհագրության ուսուցման գործընթացում կան հնարավորություններ մեթոդի

կիրառման համար հենց դասի ընթացքում: Առավել նպատակահարմար է մեթոդի կիրառումը «ռեգիոնալ աշխարհագրություն» դասընթացի շրջանակներում խոշոր թեմաների և առանձին հիմնախնդիրների ուսումնասիրման նպատակով: Հաճախ հետազոտական մեթոդը կիրառվում է երկրամասագիտական ուսումնասիրությունների կատարման ընթացքում, քանի որ այն ենթադրում է տեղեկության հավաք և վերլուծություն անմիջապես բնության գրկում և արտադրական ձեռնարկություններում: Տվյալ պարագայում ուսուցիչը նախապես տալիս է աշակերտներին հետազոտական առաջադրանքներ, խորհուրդներ է տալիս, ուղղորդում և օգնում է պլանավորել աշխատանքը: Հետազոտության արդյունքների հիման վրա աշակերտները կատարում են զեկույցներ, ուսուցիչը ղեկավարում է քննարկումները և միասին կատարում են եզրահանգում:

Հետազոտական մեթոդն անփոխարինելի է «ռեալ» պրոբլեմային ուսուցման պայմաններում, որը հաշվի է առնում աշակերտների անմիջական հետաքրքրություններն ու պահանջմունքները: Ռեալ ուսումնական պրոբլեմը պետք է ելնի աշակերտի պահանջմունքից և համապատասխանի նրա պատրաստվածության մակարդակին: Ն.Գրեյվզի աշխատությունում բերված է հետևյալ օրինակը. «Մոտակա հանգստյան օրերին նախատեսվում է արշավ, մեզ անհրաժեշտ է իմանալ թե ինչ եղանակ է սպասվում այդ օրերին, որպեսզի որոշենք, թե ինչ հագուստ և հանդերձանք է մեզ հարկավոր: Դասարանը պետք է բաժանվի խմբերի, որոնք կմշակեն եղանակի կանխատեսումը և կտան ռեալ առաջարկներ»: Այստեղ առկա է իրական ուսումնական խնդիր, որի լուծումը պահանջում է ուսումնական նյութի մշակման լուրջ աշխատանք:

Հետազոտական մեթոդը կիրառվում է նաև դասարանական պայմաններում, այս պարագայում առաջարկվում են երկարատև լուծում պահանջող հանձնարարություններ, որոնց կատարման համար անհրաժեշտ է լրացուցիչ նյութի հավաքում, վերաիմաստավորում («ավանդական պրոբլեմային ուսուցում», որում կիրառվում են գիտությունից փոխառնված և աշակերտների հնարավորություններին հարմարեցված ուսումնական խնդիրներ): Ուսուցչի գործառույթը կայանում է խնդրի ձևակերպման, աշխատանքի կատարման մեթոդների ներկայացման և կատարված աշխատանքի շտկման մեջ, այսինքն նա կրկին կատարում է ուղղորդող դեր:

Նշենք, որ պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական և հետազոտական մեթոդների ընտրությունը կախված է ուսումնական աշխատանքի պրոբլեմայնության մակարդակի ընտրությունից՝

ա) ավանդական՝ ուսուցիչն ինքն է առաջարկում պրոբլեմը և ընդգրկում աշակերտներին դրա քննարկման մեջ (ուսուցման մեթոդը պրոբլեմային շարադրանք):

բ) գիտելիքի պրոբլեմային ներկայացումը՝ պրոբլեմն առաջարկում է ուսուցիչը, աշակերտները փորձում են այն լուծել ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ, աշակերտներն ընդգրկվում են խնդրի լուծման տարբեր փուլերում (ուսուցման մեթոդը՝ մասնակի որոնողական);

գ) աշակերտներն իրենք են առաջարկում և ինքնուրույն լուծում պրոբլեմը ուսուցչի ուղղորդող գործունեության ներքո (ուսուցման մեթոդը՝ հետազոտական): Նշված բոլոր մեթոդները, ինչպես տեսնում ենք, ծառայում են գիտելիքի յուրացման տարբեր մակարդակներին և պայմանավորված են միմյանցով: Առավել ակնառու այդ կապն արտահայտվում է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Սովորողների իմացական ինքնուրույնության մակարդակն ու ընտրված մեթոդները	
Գիտելիքի յուրացված մակարդակ	Աշխարհագրության ուսուցման մեթոդ
Աշակերտները վերարտադրում են գիտելիքը այն տեսքով, ինչպես այն ներկայացված է դասագրքում կամ մատուցվել է ուսուցչի մկողմից:	Բացատրացուցադրական մեթոդ
Աշակերտները կիրառում են գիտելիքներն ու կարողությունները ըստ պլանի	Վերահիշական կամ ռեպրոդուկտիվ մեթոդ
Գիտելիքների և կարողությունների կիրառում նոր ուսումնական իրավիճակում (ստեղծագործական մոտեցում)	Պրոբլեմային շարադրանքի մեթոդ Մասնակի- որոողական մեթոդ և հետազոտական մեթոդ:

Մեթոդների երկու դասակարգումների (ըստ գիտելիքի ստացման աղբյուրի և ըստ իմացական գործունեության բնույթի) բնութագրման և ուսումնասիրման արդյունքների հիման վրա կատարում ենք հետևյալ եզրակացությունները՝

- ժամանկակից դպրոցի խդիրների լուծումը, սովորողների նախապատրաստումը ինքնուրույն կյանքի պահանջում են, որ ուսումնական գործընթացում մեծ ուշադրություն դարձվի սովորողների իմացական գործունեության զարգացմանը:
- դպրոցական աշխարհագրության բնույթն այնպիսին է, որ սովորողների ինքնուրույնությունն արտահայտվում է այն դեպքում, երբ իրենց գործունեությունը իրականացվում է գիտելիքի ձեռքբերման մեկ կամ մի քանի աղբյուրի հետ: Եվ քանի որ հիմնականում աշխարհագրության ուսումնասիրման առարկաները հնարավոր չէ բերել դասարան, կարևորվում է աշխատանքը ուսուցման միջոցների հետ:

Այսպիսով, աշխարհագրության ուսուցնան շրջանակներում սովորողների իմացական գործունեությանը բնորոշ է գիտելիքի դուրսբերումը աղբյուրից, այն մտավոր գործողություն է և կատար վում է ինքնուրույնության տարբեր աստիճանների պայմաններում: Հետևաբար, սովորողի

իմացությունը իրականացվում է ոչ թե ուսուցման մեթոդի շնորհիվ, այլ նրա միջոցով, ուսուցչի գործունեության ներքո, որն իր գործողություններով մղում է աշակերտին պատասխան գործողության: Այս հանգամանքով է պայմանավորված աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում ընդունված մեթոդները երկու դասակարգումը, որի հիմքում ընկած է երկու հատկանիշ մեթոդների արտաքին (գիտելիքի աղբյուր) և ներքին կողմը (սովորողի իմացական ինքնուրույնության և ակտիվության մակարդակներ):

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Աշակերտի ինքնուրույնության ապահովումը դասագործընթացում մեթոդների էական բնութագրիչներից մեկն է: Ժամանակակից մեթոդական գիտությունը մեծ տեղ է տալիս աշակերտի ինքնուրույն գործունեությանը և այս իմաստով կարևոր է տարբերակել «ինքնուրույն աշխատանք» և «աշակերտի ինքնուրույն գործունեություն» եզրույթները: Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում **ինքնուրույն աշխատանք** ասելով հասկանում ենք ուսուցման կազմակերպման մի ձև, որի ընթացքում աշակերտները առանց ուսուցչի միջամրության որոշակի ժամանակահատվածում կատարում են առաջադրանք, իսկ կատարման արդյունքները ենթակա են ստուգման: **Ինքնուրույն գործունեության** էությունը կայանում է նրանում, որ աշակերտները ոչ միայն ինքնուրույն են աշխատում, այլև գիտակցում են սեփական գործունեության ու այն գործողությունների նպատակը, որոնք պետք է կատարի ուսումնական խնդրի լուծման համար: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը պետք է ընդգրկի ողջ ուսումնական գործընթացը և իրականացվի վերհիշական և ստեղծագործական մեթոդների տարբեր հարաբերակցությամբ:

Կրթությունը, աճող սերնդի համար, մշակույթի ընկալման կազմակերպված ձև է, որի ընթացքում ձևավորվում են նաև սովորողի անձնային հատկանիշներն ու անհատականությունը: Ինքնին հասկանալի է դառնում, որ կրթության ընթացքում չի կարելի սահմանափակվել միայն գիտելիքների և կարողությունների ձևավորմամբ, այլ պետք է մեծ ուշադրություն դարձնել անձի ստեղծագործական և աշխարհի նկատմամբ նրա հուզարժեքային վերաբերմունքի ձևավորմանը՝ որպես բարոյական դաստիարակության հիմք: Նպատակին հասնելու միջոցներն են ստեղծագործական մեթոդները, որոնք ուղղված են մտածողության զարգացմանը: Մտածողության զարգացման համար անհրաժեշտ է՝

1. զարգացնել մտածողության հայտնի բոլոր ձևերը — էմպիրիկ և տեսական, վերհիշական և ստեղծագործական, որոնք սերտ փոխկապակցված ու փոխպայմանավորված են, կատարում են որոշակի գործառույթներ և ձևավորվում են համապատասխան մեթոդներով,
2. զարգացնել և կատարելագործել մտավոր գործողություն կատարելու կարողությունները վերլուծություն, համադրություն, համեմատում, ընդհանրացում, դասակարգում, կարևորի

և երկրորդականի առանձնացում և այլն: Այս կարողությունների ձևավորումը իրականացվում է պրոբլեմային ուսուցման պայմաններում:

Պետք է նշենք, որ դպրոցական աշխարհագրության կրթական և դաստիարակչական ներուժը առավել լիարժեք կբացահայտվի, եթե ուսուցման մեթոդներն ընտրվեն աշակերտների իմացական ակտիվության, ուսումնասիրվող նյութի բովանդակության, աշխարհագրական գիտելիքների առկա աղբյուրների հաշվառմամբ, սովորողների համակարգված ինքնուրույն գործունեության պայմաններում ուսուցման մեթոդները պայմանավորում են նաև ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները: Նրանց ընտրությունից է կախված աշակերտի ինքնուրույնության աստիճանը ուսուցչի գործառույթը և ընդհանրապես աշակերտի և ուսուցչի տեղն ու դերը ուսուցման գործընթացում (տես աղ. 5):

Աղյուսակ 5

Ուսուցման գործընթացի առանձնահատկությունները տարբեր մեթոդների կիարառման պայմաններում



ԻՆՏԵՐԱԿ
ՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Դասի հաջորդ **ոչ ավանդական ձևերից է «Դաս խաղը»:**Խաղը երեխայի համար սովորելու բնական ձև է: Նա նրա կյանքի փորձի մի մասն է: Խաղի միջոցով գիտելիքներ փոխանցելով ՝ ուսուցիչը հաշվի է առնում ոչ միայն աշակերտի հետագա հետաքրքրությունները, այլ նաև բավարարում է առկաներին: Ուսուցիչը, օգտագործելով խաղը, կազմակերպում է ուսուցման գործողություններ՝ ելնելով երեխայի բնական կարիքներից, և ոչ միայն նրանց (մեծահասակների) հարմարության, կարգի և նպատակահարմարության նկատառումներից ելնելով:

Երեխայի խաղի գործընթացում նրա ու մեծահասակի միջև կենսական հավասարակշռություն է պահպանվում: Խաղը խրախուսում է ուսանողին վերամարմնավորվել անցյալից կամ ներկայից մեկ այլ անձի մեջ, ստիպում է նրան «ցատկել ինքն իրենից վեր», քանի որ նա պատկերում է մեծահասակի ՝«իր վրա փորձելով» մի պատկեր, որը հեռու է իր առօրյա փորձից: Հասկանալով իրենց հերոսների մտքերը, զգացմունքներն ու գործողությունները դպրոցականները մոդելավորում են պատմական իրողությունը: Միևնույն ժամանակ, խաղի մեջ ստացված գիտելիքները յուրաքանչյուր ուսանողի համար դառնում են անձնապես նշանակալից, հուզականորեն գունավորված, ինչը նրան օգնում է ավելի խորը հասկանալ, ավելի լավ «զգալ» ուսումնասիրվող դարաշրջանը: խաղի արդիականությունը ներկայումս աճում է տեղեկատվության ժամանակակից ուսանողի գերհագեցածության պատճառով: Հեռուստատեսության, վիդեոյի, ռադիոյի, համակարգչային ցանցերը վերջին շրջանում զգալիորեն մեծացրել են երեխաների կողմից ստացված տեղեկատվության հոսքը և դրանց բազմազանությունը: Բայց այս բոլոր աղբյուրները հիմնականում նյութ են տրամադրում պասիվ ընկալման համար: Բացի այդ, խաղն ունակ է լուծել մեկ այլ խնդիր: Այսօրվա դպրոցը գերհագեցած է այսպես կոչված ինտերակտիվ ուսուցման մեթոդներով և գործիքներով, որոնք հաշվի չեն առնում երեխաների բնական հուզականությունը: Եվ խաղը օրգանականորեն համատեղում է ճանաչողական գործունեության հուզական և ռացիոնալ տեսակները:

Խաղերը դասակարգվում են ըստ տարբեր չափանիշների. Ըստ նպատակների, ըստ մասնակիցների քանակի, պայմանականորեն, կարելի է բաժանել մասնակիցներ անցյալի մտացածին իրավիճակում:

Դրանք բաժանվում են հետևյալ ըստ գործունեության բնույթի: Մասնավորապես, ըստ այս դասակարգումներից մեկի, խաղերը բաժանվում են բիզնեսի և հետահայաց: Հետահայաց խաղը նմանեցնում է մի իրավիճակի, որը ուսանողներին դնում է որոշակի իրադարձությունների ականատեսների դիրքում: Այս խաղերը, դերախաղերի և ոչ դերակատարման: Հետահայաց բնույթի դերախաղերը հիմնված են դերախաղի վրա՝ պատմական իրադարձությունների ենթատեսակների ՝ թատերական ներկայացում, թատերական խաղ և խնդիր քննարկում խաղ:

Հարկ է նշել, որ դերախաղը որպես դասավանդման մեթոդ ունի իր թերություններն ու առավելությունները: **Օգուտները**

1. հետաքրքրություն է առաջացնում դասի նկատմամբ:

2. Ուսուցման գործընթացը դարձնում է զվարճալի.

3. Կազմակերպում է ստեղծագործական որոնողական մակարդակում աշխատանք.

Դասի ոչ ավանդական ձևերից է նաև **«Մտապատկերների դասը»: Մտապատկեր,** օբյեկտիվ աշխարհի առարկաների և իրադրությունների զգայական արտացոլման գործընթաց, որոնք ընկալման գործընթացից հետո մնում են հոգեկանում մինչդեռ համապատասխան առարկաներն ու իրադրություններն այլևս մատչելի չեն ընկալման համար: Մտապատկերը զգայական արտացոլման արդյունք է. այն «հետքը», որը մնում է հոգեկանում, երբ համապատասխան օբյեկտը բացակայում է կամ էլ ընկալման համար մատչելի չէ: Այսպիսով, մտապատկերը տվյալ պահին չընկալվող և նախորդ փորձի հիման վրա վերարտադրվող առարկաների կամ երևույթների արտացոլման հոգեկան գործընթաց է: Մտապատկերների և ընկալման պատկերների առաջացման ժամանակ պատկերներն էապես փոփոխության են ենթարկվում մի քանի ներքին գործոնների՝ պահանջմունքների, մոտիվացիաների, դիրքորոշումների, կյանքի փորձի ազդեցության տակ: Մտապատկերները նման են հալյուցինացիաներին: Թե՛ մեկը, թե՛ մյուսը առաջանում են իրական օբյեկտների, որոնց արտացոլումն են հանդիսանում, բացակայության ժամանակ:Տարբերությունն այն է, որ հալյուցինացիաների ժամանակ մարդն առաջացող պատկերը համարում է իրական աշխարհի մի մաս: Ըստ այս դասակարգման՝ ընդունված է առանձնացնել մտապատկերների հետևյալ տեսակները՝ տեսողական, լսողական, շոշափելիքի, հոտառության, համի,ջերմաստիճանի և օրգանական: Սակայն դասակարգման այս մոտեցումը չի կարող դիտվել որպես ամփոփ և ամբողջական: Ըստ մտապատկերների բովանդակության առանձնացնում են՝ մաթեմատիկական, աշխարհագրական, տեխնիկական, երաժշտական և այլ մտապատկերներ, ըստ վերացարկման մակարդակի՝ կարելի է խոսել մասնավոր և ընդհանուր մտապատկերների մասին: Դասակարգվում են նաև կամային ճիգերի գործադրման մակարդակի համաձայն**:**

Դասի ոչ ավանդական ձևերից է **«Ստուգատեսը»: Ստուգատեսի** ժամանակ ուսուցիչը ամփոփում է սովորածը:

Բառի բացատրությունը հետևյալն է.

1.(փոխաբերական) Որևէ բանի հասարակական ցուցադրում ու ստուգում:

2.Ստույգ իրողությունը տեսնող՝ տեսած, ստուգապես

տեսած՝ տեսնող: Ստուգատես մարդ:

Ուսումնական գործունեություններն այդ ժամանակահատվածներում ուղղված են սովորողի հմտությունների ու կարողությունների դրսևորմանը, զարգացմանը, որոնք արտահայտվում են ամենատարբեր ստուգատեսների, փառատոնների, տոների միջոցով:

Ստուգատես անցկացնելու համար անհրաժեշտ է նախապես մշակել ժամանակացույց, որն ավելի համակարգված է դարձնում մեր աշխատանքն ու անելիքները: Այդ ժամանակ սովորողները հիմնավոր կարծիքներով, սեփական պատկերացումներով ու մոտեցումներով պետք է հանդես գան: **Ստուգատեսի արդյունքում սովորողը ձեռք է բերում՝**

-սեփական գրագետ խոսքի զարգացում

-հարցեր ձևակերպելու կարողություն և հմտություն

-ինքնուրույն մտքի զարգացում

-հիմնավոր կարծիք և տեսակետ արտահայտելու կարողություն

-տրամաբանելու և վերլուծելու կարողություն

-գաղափարական հասունություն

-ակտիվ և հասարակական կյանքով ապրող, հանրային խնդիրներին հաղորդակից քաղաքացու ձևավորում:

Դասի ոչ ավանդական ձևերից է նաև **«Դերային խաղը»:** Դերային խաղն ուսման և հոգեբանության մեջ կիրառվող մեթոդ է: Ուսուցումը դյուրին դարձնելու նպատակով, օրինակ, ուսուցիչը աշակերտներին կարող է անսպասելի իրավիճակներ առաջարկել, ուր աշակերտներին անհրաժեշտ է ընդունել որևէ դեր կամ տեսակետ, այնուհետև՝ փորձեր անել դա հասունացնելու և ավարտելու: Այն աշակերտները, ովքեր չեն մասնակցում բուն դերային խաղին, ստանձնում են դիտորդի դերը և խաղի ավարտից հետո եզրակացություններ անում: Դերային խաղն արդյունավետ իրականացնելու նախապայմանը

առաջարկվող դերային իրավիճակի իրականությանը հնարավորինս մոտ լինելու մեջ է: Ուսուցիչը մանրամասն ներկայացնում է իրավիճակի բոլոր կողմերը: Խաղը հաճախ կառուցվում է հակադիր շահերի շուրջ: Այն օգտակար է, երբ փորձ է արվում ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ կարող են տարբեր կարծիքներ ունենալ: Մեթոդի արդյունավետությունն այն է, որ

- մեր ձեռք բերած փորձը պահպանվում է երկար,
- այն գիտելիքների ու հմտությունների
- ձեռքբերման հետաքրքիր ձև է,
- այն հնարավորություն է տալիս աշակերտներին հիմնախնդիրների իրավիճակային դրսևորումները հասկանալ: Դերային խաղի բուն ընթացքից հետո, ուսուցիչը՝

1.հստակեցնում է մեզ հետ կատարվածը,

2.քննարկում է մեր սխալները,

3.մեր վարքի վերաբերյալ վերլուծություններ է իրականացնում,

4. առաջադրում է մտածելու նոր թեմաներ,

5.կապում է դերային խաղը մեր կողմից հասկանալի տեսական նյութերի հետ:Դերային խաղը հաճախ կիրառում ենք, երբ անհրաժեշտ է զարգացնել մեր՝ բանակցելու հմտությունները, հետադարձ կապ ստեղծելու:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխարհագրության դասավանդման ավանդական և ինտերակտիվ մեթոդները այս առումով անհրաժեշտ է, որ աշխարհագրության ուսուցիչը յուրաքանչյուր դասին պատրաստվի հանգամանորեն , որովհետև աշակերտի կողմից ծրագրային նյութի յուրացումը զգալի չափով պայմանավորված է այդ նյութը հաղորդողի որակից:

Աշխարհագրության դասերի հաջողությունը մեծապես կախված է նրա կահավորումից,որի վրա ուսուցիչը պետք է աշխատի օրեր և ամիսներ առաջ: Դրանք ոչ միայն քարտեզներ են, այլ նաև բազմաթիվ ու բազմաբնույթ ցուցադրական նյութեր:

Սովորողների կարողությունների և հմտությունների ձևավորման համար կարևոր նշանակություն ունի դասավանդման ընթացքում համապատասխան մեթոդների ընտրությունը:

Արդի պայմանները պարտադրում են, որ դասի արդյունավետեությունը բարձրացնելու համար պետք է կիրառել ուսուցման ժամանակակից մեթոդները: Բայց միևնույն ժամանակ չենք անտեսում ուսուցման ավանդական ձևերը:

Ներկայումս նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ մեծ հնարավորություն ունեն և՝ ուսուցիչը, և՝ աշակերտը: Ներկայիս ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ հնարավորություն ունենք ուսուցումը տանել աշակերտակենտրոնի:

Ուսուցիչը ինքը պետք է անընդհատ սովորի զարգանալ, կարողանա տիրապետել նորագույն տեխնոլոգիաներին, և աշակերտից հետ չմնա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Մինասյան Ա.Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդները ու միջոցները» Համացանց.
- Հայկական կրթական միջավայր ֆորում https://forum.armedu.am/ page 6
- Ա.Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Խ.Սարգսյան «Աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ»: